2005, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (204)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ



### Ն. Ս. Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուսումնական տարվա վերաբացման առիթով ողջունում ենք ձեզ, սիրելի դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, կրթության գործի բոլոր նվիրյալներ եւ հղում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը:*

*Բարիք է ուսումը, գիտելիքն ու կրթությունը եւ գովելի առաքինություն՝ այն մարդկանց, կյանքին ու առաջընթացին ծառայեցնելը: Մեր ժողովրդի դժվարին պատմության դարավոր փորձությունների մեջ գիրն ու դպրությունը եղել են ճանապարհ փրկության ուղի՝ հայ եւ քրիստոնյա մնալու, ապրելու եւ վերածնվելու: Այս տարի տոնախմբում ենք Հայոց Գրերի ստեղծման 1600-ամյա հոբելյանը, որի խորհրդով առանձնահատուկ պայծառ ու ոգեշունչ է նոր ուսումնաշրջանի բացումը: Սուրբ Սահակ եւ Սուրբ Մաշտոց մեր մեծ ուսուցչապետերի գործին եւ անմահ ավանդին հավատարիմ՝ զորացյալ եղեք առ Աստված հավատով, սիրով՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու ՀայրենիՄեր աղոթքն ու մաղթանքն է, որ Փրկիչ Տերը հոգու եւ մտքի առավել լույս, առավել կորով, եռանդ ու ջանասիրություն պարգեւի ձեզ՝ ուսանելու եւ ուսուցանելու, փոխադարձ սիրով ու նվիրումով արգասավորությամբ աշխատելու, որպեսզի նոր ուսումնական տարին մեծ հաջողություններ բերի բոլորիդ եւ նոր ուրախություններ: Թող աստվածային ամենառատ սերն ու շնորհները մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի միշտ ձեզ հետ լինեն ու բոլորի՝ ամեն:*

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

**18 Օգոստոսի**

### Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի հրավերով Հայաստան ժամանած Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ռենե Վան Դեր Լինդենին՝ ԱԺ փոխնախագահ Տիգրան Թորոսյանի ուղեկցությամբ:

Ողջունելով պատվարժան հյուրի անդրանիկ այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց ԵԽԽՎ նախագահին՝ այն նպաստների համար, որ Եվրոպայի խորհուրդը ներդնում է Հայաստանի նորանկախ պետականության կյանքում ժողովրդավարական արժեքներն ամրագրելու ուղղությամբ, Հայաստանի՝ Եվրոմիությանը ինտեգրվելու, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացներում:

**«Մենք լիահույս ենք, որ Եվրոխորհրդի աջակցությամբ պիտի կարողանանք տարածաշրջանում խաղաղությունն անշրջելի, անծաշրջանում խաղաղությունն անշրջելի, անբեկանելի դարձնել եւ նաեւ արդար, օրինական լուծումներ ապահովել տարածաշրջանում առկա խնդիրների, հատկապես մեզ հուզող ղարաբաղյան հիմնահարցի»**, - մասնավորաբար նշեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Իր հերթին Ռենե Վան Դեր Լինդենը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար եւ նշեց, որ վերոհիշյալ բոլոր այդ գործընթացներում կարեւոր է եկեղեցիների եւ կրոնների դերակատարությունը, որոնք միջեկեղեցական եւ միջկրոնական երկխոսությունների միջոցով կարող են մեծ ներդրում ունենալ հասարակության մեջ խնդրո առարկա արժեքների հաստատման գործում:

Հանդիպմանը նաեւ խոսվեց Հայ Եկեղեցու եւ աշխարհասփյուռ իր հոտի առջեւ ծառացած մարտահրավերների, հասարական կյանքում Եկեղեցու գործունեության, Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին:

Հանդիպմանը ներկա էր Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

**26 Օգոստոսի**

### Կանադայի եկեղեցիների հոգեւոր առաջնորդներին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայոց գրերի գյուտի 1600-ամյակի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած՝ Կանադայի եկեղեցիների առաջնորդների պատվիրակությանը՝ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի եւ Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանի ուղեկցությամբ:

**«Ձեր ներկայությունն այստեղ՝ Ամենայն Հայոց Սրբություն Սրբոցում, մեծ զորակցություն է մեր առաքելության իրականացման ճանապարհին: Մեզ համար ձեր ներկայությունը վկայություն է այն ջերմ հարաբերությունների, որ առկա են ոչ միայն միջեկեղեցական հարաբերություններում՝ հոգեւոր պետերի մակարդակով, այլեւ թեմական կառույցներից ներս: Եվ մենք ուրախ ենք այդ եղբայրական համագործակցության համար, որ առկա է մեր եկեղեցիների կյանքում»**,- ասաց Հայոց Հայրապետը՝ ջերմորեն ողջունելով Կանադայի տարբեր եկեղեցիների թեմակալ առաջնորդների եւ միջեկեղեցական կառույցների նախագահների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Նորին Սրբությունը հյուրերին հանգամանորեն ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմական ուղին եւ ներկայիս գործունեությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Կանադայի հայոց թեմի առաջնորդ Բագրատ սրբազանին՝ եկեղեցանվեր արդյունաշատ ծառայության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ Կանադայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը եւ մասնավորապես իր գնահատանքը հայտնեց եկեղեցիների առաջնորդներին այդ հարցում գործուն աջակցության, ինչպես նաեւ ցեղասպանության զոհերի հիշատակման արարողությանը մեր ժողովրդին աղոթակից լինելու եւ մասնակցություն բերելու համար:

Իրենց հերթին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջերմ ընդունելության եւ ցուցաբերած հոգածության համար շնորհակալական խոսք ուղղեցին Կանադայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Մետրոպոլիտ Սոտերիոս արքեպիսկոպոսը, Կանադայի Կաթոլիկ Եպիսկոպոսների



կոնֆերանսի նախագահ եւ Ս. Ջոնի արքեպիսկոպոս Կարդինալ Բրենդն Օբրայենը, Կանադայի Անգլիկան Եկեղեցու պետ արքեպիսկոպոս Էնդրյու Յաթչիսոնը եւ Կանադայի եկեղեցիների խորհրդի նախագահ դոկ. Ռիչարդ Շնայդերը:

Հանդիպմանը անդրադարձ եղավ նաեւ 21-րդ դարում Քրիստոսի Ս. Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին եւ քննարկվեցին դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:

Հանդիպմանը ներկա էին Գուգարաց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի աշխատակից Տ. Հովակիմ աբղ. Մանուկյանը:

Տե՛ս էջ 2

*Տե՛ս էջ 1*

**31 Օգոստոսի.**

## Արգենտինայի արտաքին գործերի, միջազգային առեւտրի եւ պաշտամունքի նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Արգենտինայի արտաքին գործերի, միջազգային առեւտրի եւ պաշտամունքի նախարար Ռաֆայել Անտոնիո Բիելսայի գլխավորած պատվիրակությունը՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Արման Կիրակոսյանի եւ Արգենտինայում ՀՀ դեսպան Արա Այվազյանի ուղեկցությամբ: Պատվիրակության կազմում էին նաեւ Հայ Եկեղեցու նվիրյալ զավակներ՝ բարերարներ Էդուարդո Էռնեկյանը եւ Լեոն Կառլոս Արսլանյանը:

Ողջունելով նախարարի այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ եւ ուրախությամբ վերհիշեց 2004թ. մայիսին Արգենտինա կատարած իր հովվապետական այցելությունը եւ հանդիպումը պրն. Բիելսայի հետ: Նորին Սրբությունն իր խոսքում ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայիս գործունեությունը, ապա, ի դեմս նախարարի, իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց Արգենտինայի իշխանություններին՝ այն հոգատար վերաբերմունքի համար, որ դրսեւորում են հայ ժողովրդի զավակների նկատմամբ: Նա նաեւ իր օրհնությունը հղեց արգենտինահայ բարերարներին, ովքեր կարեւոր ներդրում են ունենում Հայաստանի զարգացման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ անդրադարձավ Հայոց Ցեղասպանության խնդրին. «Արգենտինան առանձնահատուկ տեղ ունի մեր ժողովրդի հոգուց ներս: Արգենտինան այն երկրներից մեկն է, որը ճանաչեց եւ դատապարտեց Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ գործած մեծագույն ոճիր: Եվ մեր ժողովուրդը գիտի գնահատել արիության ոգին Արգենտինայի եւ իր ժողովրդի»:

## Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների հանդիսավոր փակումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Օգոստոսի 22-ին ավարտվեցին Գեւորգյան հոգեւոր ճեմարանում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ մեկնարկված սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա դասընթացները: Այդ առիթով Վեհարանի հանդիսությունների սրահում կազմակերպվել էր հրաժեշտի ցերեկույթ:

Առաջինը խոսք վերցնելով՝ ՀՀ Գիտության եւ կրթության նախարար պրն Սերգո Երիցյանը մասնավորապես ասաց. «Դուք աշխարհի ամենաերջանիկ մարդկանցից եք, քանի որ շուրջ մեկ ամիս հյուրընկալվել եք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Դա երեւի վիճակված չէ շատ-շատերին»: Նա անդրադարձավ նաեւ մի քանի նոր ծրագրերի, որոնք առաջիկայում իրագործվելու են Նորին Սրբության հովանավորությամբ:

Իրենց երախտագիտությունը եւ բարեմաղթանքները հայտնեցին ուսուցիչներից մի քանիսը՝ հաստատելով. «Ահա այս է Սփյուռք-Հայրենիք ոսկե շղթան, որ անպառակտելի է»: Ապա Վեհափառ Հայրապետը եւ պարոն նախարարն ուսուցիչներին հանձնեցին հավաստագրեր եւ շնորհակալագրեր:

Հավարտ հանդիսության իր հայրական սերը եւ օրհնությունը ներկաներին բաշխեց Նորին Սրբությունը. *«Այստեղ մեր հանդիպումներից մեկի ընթացքում ուսուցիչներից մեկը հարցրեց, թե՝ Վեհափա՛ռ, ինչպե՞ս հանգեցիք այս գաղափարին՝ դասընթացները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կազմակերպելուն: Առաջին հերթին, բնականաբար, մեր ցանկությունն էր, որպեսզի, ինչպես դարեր շարունակ Ս. Էջմիածինը հովանավորել եւ իր գավթի տակ է կազմակերպել կրթության, դաստիարակության գործը մեր ժողովրդի զավակաց, այնպես էլ այսօր այդ առաքելության մեջ պիտի շարունակի իր ներդրումն ունենալ: Նաեւ որպեսզի մենք կարողանանք մեր գնահատանքն արտահայտել մեր մանկավարժին, հայ ուսուցչին՝ այն կարեւոր ծառայության համար, որ իրականացնում է հայ կյանքից ներս:*

*Միաժամանակ նաեւ գիտակցում էինք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում դուք ավելի պիտի զորանայիք, ավելի պիտի ամրանար ձեր մեջ ձեր առաքելության գիտակցությունը՝ առավել նախանձախնդրությամբ իրականացնելու այն՝ հայ մանուկի կրթության նվիրական գործում: Եվ վստահ եմ, որ այս մեկ ամսվա ընթացքում կատարվեց այն, ինչ որ մենք ակնկալում էինք եւ սպասում: Դուք հաղորդ դարձաք մեր սրբազան ուխտատեղիներին՝ դրանց այցելելով, մեր պատմությանը, մեր անցյալին, մեր ներկային եւ գալիքի տեսլականին՝ մենության մեջ այս սուրբ մթնոլորտի, ըմբոշխնեցիք Մայր Աթոռի խորհախորհուրդ երեկոները: Նաեւ զորացաք հոգով, լավատեսությամբ՝ դեպի մեր ժողովրդի վաղվա օրը՝ մեր ժողովրդի կյանքին առնչվելով, մեր ժողովրդի ձեռքբերումներին հաղորդ դառնալով... Կրթության գործում որքան կարեւոր է հայ մանկանը գիտելիք փոխանցելը, նույնքան եւ առավել է ոգի հաղորդելը, որպեսզի նա, հայրենիքից հեռու ապրելով, կարողանա դառնալ նրա կյանքի մասնիկը: ... Մեր եկեղեցիները ճշմարիտ գանձարաններն են. ոչ միայն պահպանողներն այդ հարստության, այդ արժեքների, այլեւ հարստացնողն ու թրծողը՝ հարատեւ դարերի մեջ եւ ապագայում»*: Նորին Սրբությունը մաղթեց ուսուցիչներին Աստծո սիրով, առ Աստված ապավինությամբ շարունակել իրենց ազգօգուտ առաքելությունը:

Հարկ է նշել, որ ուսուցիչները դասընթացներին զուգընթաց պատրաստել էին նաեւ գեղարվեստական համարներ, որոնք էլ եզրափակեցին հանդիսությունը:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***

### *ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ*

# ԵԿԵՂԵՑԻ



## ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

*Սկիզբը՝ թիվ 11-12, 15*

Արդի ժամանակներում, երբ աշխարհայնությունը եւ բարքերի թուլությունն ամենուրեք տիրապետող են դարձել, մարդիկ արհամարհանքով են նայում ճգնավորությանը: Բայց պետք է գիտենալ, որ սա իր ժամանակի ամենից տրամաբանական հոգեւոր ուղին էր եւ բարոյապես ու ֆիզիկապես ամենից առողջ կենսակերպը: Փաստելու համար մի ակնարկ նետենք այն ժամանակների վրա, որոնցում ծնունդ առավ ճգնավորությունը: Երբ 313 թ. Կոստանդիանոս կայսեր «Միլանի հրովարտակով» Եկեղեցին ազատվեց հալածանքներից, բարեպաշտների հետ նաեւ անբարո մարդիկ էլ սկսեցին մուտք գործել Եկեղեցի, քանզի առանձնակի քաջություն չէր պահանջում քրիստոնյա լինելու համար, ինչպես հալածանքների շրջանում էր:

Մեր Եկեղեցու մեծ դեմքերից Շնորհք Պատրիարք Գալուստյանն այսպես է մտորում ճգնավորության եւ վանականության մասին. «Այս ազատութիւնը որքան ալ բաղձալի էր եկեղեցիի բարգաւաճումին եւ տարածման տեսակէտէ, նոյնքան ալ ճակատագրական սկզբնաւորութիւնը եղաւ եկեղեցիի վատառողջ ուռեցումին կամ գիրացումին, եւ հետեւաբար՝ մասնակի այլասերումին», եւ ապա հավելում, որ հետզհետե եկեղեցին գրավեց այն դիրքը, որը հեթանոսությունն ուներ նախապես: Նախորդ դարերում հեթանոսությունն էր հալածողը, իսկ հետագայում էլ եկեղեցին սկսեց հալածել հեթանոսությանը: (Նշենք, որ այստեղ, եկեղեցի ասելով, պատրիարքը նկատի ունի եկեղեցի մուտք գործած տարբեր անձանց եւ տիրող մթնոլորտը): Բացի դրանից, հատկապես Արեւելքում, Ավետարանի քարոզությանը եւ քրիստոնեական կրոնի տարածմանը նվիրվելուց ավելի քրիստոնյաներն ընկղմվեցին աստվածաբանական անհատնում վեճերի մեջ: Բարդ ու ծաղկյալ պաշտամունքային արարողությունները, որքան էլ մարդկային զգայարանների համար գրավիչ էին եւ գեղարվեստական մեծ արժեք ունեին, հետզհետե վերածվեցին ավելի ձեւականության եւ արվեստականության, քան Քրիստոսի պահանջած «Հոգով եւ ճշմարտությամբ» պաշտամունքն էր, ինչն այսօր տեսնում եւ չենք տեսնում արարողությանը մասնակցող տարբեր անձանց մեջ:

Երբ խաղաղություն ու ազատություն տիրեց քրիստոնեության մեջ, հեթանոս բարքերը եւս սկսեցին մուտք գործել եկեղեցի, եւ ստեղծվեց կենցաղային մի կացություն, ուր այլեւս դժվար էր իրարից զանազանել հեթանոսականն ու քրիստոնեականը: Նույնիսկ կյանքի անմեղ կոչված երեւույթներից՝ կերուխումից, երգուպարից, խնջույքներից, խաղերից, հաճույքներից որքա՞նը քրիստոնեական կարող էր նկատվել եւ որքանը՝ հեթանոսական, վիճելի հարց էր: Այնպես որ քրիստոնեական կյանքը եւ մտայնությունը շատ բան էր կորցրել իր մաքրությունից, պարզությունից եւ բարոյական բարձրությունից: Եվ մի շարք քրիստոնյաներ, տեսնելով հեթանոսության եւ քրիստոնեության այս անսուրբ խառնուրդը, հեռացան հասարակությունից, քաշվեցին անաղարտ բնության ծոցը՝ պահելու համար իրենց կյանքի բարոյական մաքրությունը Աստծո մշտական ներկայության մեջ:

Նրանց շնորհիվ քրիստոնեությունը կարողացավ մաքրվել եւ անցնել հաջորդ սերունդներին: Այս իրագործելու համար նրանք գործի դրեցին գերմարդկային ճիգեր, որի պատճառով էլ կոչվեցին ճգնավորներ: Իսկ ինչո՞վ է արդյոք մեր դարը տարբերվում այն ժամանակվա ապականությունից: Բազում քրիստոնյա երկրներում այսօր եւս տեսնում ենք բարքերի նույն ապականությունը, անաստվածությունը կամ էլ հեթանոսությունը: Իսկ ի՞նչ օգուտ կարող են տալ ճգնավորները կամ վանականներն այսօրվա մարդկությանը: Հոգեւոր կյանքում կատարելության հասած մարդկանց աղոթքներով բազում ժողովուրդներ կարող են փրկվել: Նրանց ազնիվ օրինակը տեսնելով՝ բազմաթիվ անհավատ մարդիկ կարող են հավատալ եւ Երկնքի արքայությանն արժանանալ: Սուրբ Գրիգոր Նազիանզացին ասում է. «Ինձ այնպես է թվում, թե ամեն էակներից փոփոխական ու բազմակողմանի մարդուն հովվելը եւ ուղղելը արվեստների արվեստն է եւ գիտությունների գիտությունը»: Եվ եթե մենք համաձայն ենք, որ ստեղծվեն մշակույթի, արվեստի կենտրոններ՝ դրանք ծաղկեցնելու համար, եթե համաձայն ենք, որ ստեղծվեն գիտության կենտրոններ՝ գիտությունը ավելի զարգացնելու համար, ուրեմն ինչո՞ւ չպետք է ստեղծվեն վանական կենտրոններ, ուր մարդիկ զբաղված են արվեստների արվեստով եւ գիտությունների գիտությամբ, ուր ամեն օր եւ ամեն ժամ աղոթքներ են բարձացվում առ Աստված՝ մարդկանց փրկության եւ հոգեւոր խաղաղության համար, եւ որտեղ ուխտավորները կկարողանան տեսնել կյանքի մեծագույն բարոյականության եւ ճշմարիտ սիրո հիանալի օրինակներ եւ դրանցով զորացած կվերադառնան իրենց ընտանիքները՝ առավել կատարելագործելու իրենց կյանքը՝ երջանկություն եւ խաղաղություն հաստատելով իրենց ընտանիքներում: Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, խոսելով տարբեր երկրների վանքերի մասին, ասում է, որ շատ վանքեր դարձել են ինչ-որ գործունեության կամ մշակութային հաստատություններ, որի համար բացարձակ անհրաժեշտություն չկա կուսակրոնության, այսինքն՝ կյանքի ամբողջական ողջակիզման, քանի որ աշխարհիկ մարդիկ էլ նույն պայմանների տակ կարող են նույն գործը անել: Հետեւաբար՝ հոգեւորականին հոգեւորական է դարձնում կամ մարդուն հոգեւոր է դարձնում առաջին հերթին ոչ թե գիտական ինչ-որ աշխատություն, այլ Քրիստոսի պատվիրած ամենժամյա անդադար աղոթքը, որով կարող են զբաղվել հատկապես վանականները եւ ճգնավորները: Հոգսերով ու հաճույքներով ծանրաբեռնված այս աշխարհը չի կարողանում կամ չի ուզում հասկանալ ճգնավորների եւ վանականների մեծագույն կարեւորությունը: Սա բացատրելու համար Շնորհք Պատրիարքը գեղեցիկ օրինակներ է բերում: Երբ Հիսուս Քրիստոս Գալիլեական ծովակի փոթորիկը դադարեցրեց, դրանից օգտվեց ոչ միայն նավը, որի մեջ գտնվում էին Քրիստոսն ու Իր աշակերտները, այլ նաեւ այն բոլոր մյուս նավերը, որոնք այդ պահին գտնվում էին ծովակի մեջ եւ տագնապի էին մատնվել Քրիստոսի աշակերտների պես: Եվ այդ տասնյակներով նավերի մեջ գտնվող հարյուրավոր մարդիկ երբեք չիմացան, թե ո՞ւմ էին պարտական փոթորկի հանկարծակի դադարեցման համար: Նույնպես, երբ Եվրոպա ներխուժող ասպատակիչ բանակները կասեցվեցին այս կամ այն ճակատամարտում մի քանի քաջա-



րի գնդերի կողմից, իրենց ետեւում գտնվող բազմաթիվ երկրների միլիոնավոր մարդիկ երբեք չանդրադարձան, թե ինչ ահավոր պատուհասներից փրկվեցին: Նույնն է պարագան ճգնավորների եւ բոլոր սրբերի մղած հոգեւոր պատերազմի: Քրիստոնեական եկեղեցին եւ ընդհանրապես՝ համայն մարդկությունը մեծապես պարտական է այս քչերին՝ վանականներին ու ճգնավորներին:

*Շարունակելի*

***Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ***

**ԳԵՈՐԳ Զ ՉՕՐԵՔՉՅԱՆ**
Ամենայն Հայոց կաթողիկոս
(ծն. 1868, կթղ. 1945-1954 թթ.)

# Վշտակիր Յիսուս



*«Եւ նոքա առեալ տանէին զՆա.*
*եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն,*
*եւ ելանէր ի տեղին, որ անուանեալ էր Գագաթան*
*եւ կոչէր եբրայեցերէն Գողգոթա»*
*(Յովհ. ԺԹ 17)*

Պատահում է երբեմն, որ մարդկային կեանքի խորագոյն եւ լաւագոյն իմաստը յանկարծ պարզւում է ու յայտնագործում մի պատահական դէպք, մի որեւէ գործ եւ կամ որեւէ ապրում: Սակայն այս երեւոյթը պատահում է ո՛չ սովորական, այլ արտակարգ անհատների հետ, որոնք ծնուել են որոշ կոչումով եւ օժտուած՝ բնատուր ձիրքերով:

Այսպիսի տաղանդաւոր եւ հանճարեղ անհատների կեանքը մի ուժգին մաքառումն է սկզբում անորոշ եւ աղօտ մի արժէքի՝ մի թանկագին մարգարտի համար, որ սակայն ապագայում հետզհետէ պարզւում եւ որոշւում է եւ կազմում նոցա կեանքի ու գոյութեան իմաստը:

Մեծ մարդոց զարթնումի այս ապրումները յաճախ պատմութեան մէջ դարաշրջաններ են կազմում: Թարմ ոյժի նոր հոսանք է սկսւում, մարդկային հոգիների մէջ թարմ գիտակցութիւն է ծնունդ առնում, եւ այդ թարմ ոյժն ու գիտակցութիւնը դառնում են գալիք սերնդի հոգեւոր սնունդն ու դաստիարակը:

***Փրկչի կեանքի մէջ էլ կայ այդ մոմենտը. եւ այդ մոմենտը Նրա չարչարանքներն են: Այն օրն ու գիշերը, երբ Նա հոգով ու մարմնով մաքառում էր կորստաբեր ոյժերի դէմ, այդ այն մոմենտն էր, երբ Յիսուս Իր ամբողջ էութեամբ հաւաստիացաւ Իր ապրումների ճշմարտութեան մէջ, որ դարձաւ Նրա իդէալը եւ որով տիեզերական պատմութեան մէջ նոր էջ մուծեց:***

Չարչարանաց պատմութեան մէջ էլ կարելի է մատնանշել մի պատկերի վրայ, որով Յիսուսի չարչարանաց իմաստը պարզ եւ զօրեղ է ընդգծուած. մի պատկեր, որ մեր մէջ անջնջելի է մնացել եւ կը մնայ, եւ որ Յովհաննէս աւետարանիչը երկու խօսքով է արտայայտել. «Եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն»:

Մարդկութիւնը Յիսուսին անարգական մահուան դատապարտելուց յետոյ Նրան փառաց ի փառս բարձրացրեց, Նրան աստուածային յայտնութիւն համարեց, պատկերը սրբավայրերում կախեց, անունը հոգեւոր երգերով ու աղօթքներով փառաբանեց, դարեր շարունակ Նրա առաջ ծունր իջաւ եւ որպէս Աստուած պաշտեց: Սակայն այս բոլորը, որ մարդկութիւնը ստեղծեց Նրա անձի փառաբանութեան համար, անկարող եղաւ ջնջել եւ ոչ իսկ նսեմացնել այն պարզ ճշմարտութիւնը, որ Նրա կեանքի անմիջական արձագանքն է եւ որ կազմում է Նրա կեանքի իմաստն ու բովանդակութիւնը. «Եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն»:

Մարդիկ շատ բան են ուսել Փրկչից. Նրա հրապարակային գործունէութիւնը, որքան էլ կարճատեւ է, եւ որքան էլ սեղմ ու համառօտ նրա աւետարանական նկարագրութիւնը, սակայն եւ այնպէս պարունակում է խոր մտքեր եւ դաստիարակիչ պատկերներ: Բայց այդ պատկերներից եւ ոչ մէկը մարդու համար այնքան տպաւորիչ, այնքան նշանակալից եւ սիրտ յուզող ու մնայուն չէ, որքան այն պարզ պատկերը թէ՝ «Եւ բարձեալ էր Ինքնին զխաչափայտն»: Այդ պարզ, բայց խորիմաստ խօսքերն ըմբռնել կարող ենք, երբ փորձենք մեր կեանքը վերլուծել եւ մեր կեանքով հասկանալ նաեւ Փրկչի կեանքի այդ մոմենտը: Խաչ, տանջանք՝ աղօտ ու մշուշապատ, բայց ծածանւում է ամէն գոյութեան եւ կեանքի վրայ՝ նորանոր ձեւերով ու պատկերներով: Ինչպէս ամպերը երկնքի երեսին միշտ փոփոխուելով կազմում են նոր ձեւեր ու կերպեր՝ մերթ լուսաւոր, մերթ գորշ ու մութ, եւ երբեք չեն անյայտանում, այլ ընդհատումներով միշտ բարձրանում են մեր տեսողութեան հորիզոնի սահմաններից եւ կանգնում մեր եւ բաց երկնքի մէջ, այսպէս էլ խաչն է միշտ ծածանւում մարդկային կեանքի վրայ միշտ նոր ձեւերով, միշտ նոր կերպերով: Քանի մարդ ներքնապէս ամփոփւում ու խորանում է, այնքան աւելի պարզ է տեսնում եւ ըմբռնում այս ճշմարտութիւնը:

Հազարաւոր տարիներ առաջ Գանգէս գետի ափին նստած էր մի հնդիկ ճգնաւոր, որ իր հոգու աչքերը յառած կեանքի թատերաբեմի վրայ՝ տարուած էր կեանքի իմաստը հասկանալու որոնումներով, երբ յանկարծ դուրս թռաւ նրա բերնից թէ՝ «Կեանքը տանջանք է»:

Արաբիայի անապատի մի բուսավայրում (օազիսում)՝ սեփական կալուածների աւերակների ու փլատակների առաջ, գլխին վայ տալով՝ նստած էր Յոբը՝ աշխարհի մեծ համբերատարը՝ հոգով ու մարմնով հիւանդ, աշխարհի ունայնութեան համոզումը դրոշմած իր սրտում. «Ո՞չ ապաքէն պատերազմ է կեանք մարդոյ ի վերայ երկրի եւ իբրեւ աւուրք վարձկանի աւուրք նորա...» (հմմտ. Յովբ Է 1): Եւ այս տանջանքի մելամաղձոտ ձայնը հնչել է ամբողջ տիեզերական պատմութեան ընթացքում ամէն տեղ, մինչեւ մեր օրերը, երբ գերման խորիմաստ իմաստասէրներից մէկը (Շոպենհաուէր) նոյնն արտայայտում է կրակոտ ու զարհուրելի ձեւով. «Եթէ կեանքի էական ու անմիջական նպատակը տանջանքը չէ,- ասում է նա,- աշխարհի մէջ մեր գոյութիւնը անիմաստ է, որովհետեւ դժբախտութիւնը կեանքի օրէնք է»:

Այս խօսքերը չափազանցութիւն չեն, այլ կեանքից առած ճշմարտութիւն. ով թերահաւատում է, թող ստուգէ: Թող մտնէ, խնդրեմ, մի բանտ, հոգեկան հիւանդների մի տուն, ինչե՞ր ասէք չի տեսնի այնտեղ. կամ թէ անցնի մեծ քաղաքի մարդաշատ փողոցներից մէկով եւ դիտէ անցորդների դէմքերի դառնութեան, չարութեան, վշտերի եւ հիւանդութեան դաժան արտայայտութիւնը. արդեօք կը կարողանա՞յ գոնէ մի ժամ տանել այդ դժոխային պատկերը:

Բարեպաշտ եղբայրնե՛ր եւ քոյրեր, խաչն ամենուրեք կայ. իւրաքանչիւր անհատ եւ ժողովուրդ իւրատեսակ խաչ ունի: Նա կայ դուրսը՝ մեր շուրջը, նա կայ ներսը՝ մեր մէջը. նա անբաժան անդամ է մեր ընտանիքի, ինչպէս եւ մեր սրտի. զուր է փորձել ազատուել նրանից. նա միշտ եղել է եւ կը լինի: Մարդկային կեանքի մէջ խաչը, որ վշտերի խորհրդանշան է, միշտ գոյութիւն է ունեցել. եւ այդ փաստն է, որ մարդոց մէջ երկիւղի զգացմունքն է զարթեցրել գերբնականի առաջ: Կրօնը սկզբնապէս երկիւղն է եղել այն էակի հանդէպ, որ կեանքի խաչն է ուղարկում մեզ: Կեանքի խաչն է, որ մարդոց կուրծքն է ճնշում եւ ամենայն երկիւղածութեամբ դէպի վեր, դէպի վերին զաղտնի ոյժերն է նայել տալիս, որոնք ղեկավարում են մեր ճամփան:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ՔԱՐՎԱՆՍԱՐԱ ԳՅՈՒՂԻ ՔԱՀԱՆԱՆ ՈՒ ՆՐԱ ԱՊՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Աղստեւի հովտի Քարվանսարա գյուղը (ներկայիս Իջեւան քաղաքը), հիմնադրված 18-րդ դարի 80-ական թվականներին, ժամանակին մի ապահով վայր էր Թիֆլիսից Երեւան եւ Ալեքսանդրապոլ մեկնող մարդկանց անվտանգ երթեւեկությունն այդ տարածքներում վխտող բազմաթիվ ավազակախմբերի հարձակումներից պաշտպանելու համար:

Աղստեւի հովիտը՝ գեղատեսիլ բնությամբ, բնակավայրերով, աշխատասեր, ստեղծագործ մարդկանցով, ավանդույթներով, հերոսական ու պատմական հարուստ անցյալով, իր ուրույն տեղն ունի մեր պատմության մեջ: Այն հարուստ էր նաեւ իր երախտավորների, իր նշանավոր զավակների ազգանվեր գործերով:

Գրավոր աղբյուրներում պահպանված բնակավայրի նշանավոր մարդկանց թվում հիշատակվում է նաեւ Առաքել Էդիլյանի անունը:

Հիմնավորվելով այստեղ եւ լինելով առաջադեմ այր՝ Առաքել Էդիլյանը մեծապես նպաստել է դպրոցի հիմնադրմանն ու գյուղի հետագա զարգացմանը: Գյուղում կրթյալ, ուսյալ մարդկանց դերը կարեւորելով՝ նա 1861 թվականին ծնված իր որդի Արշակին գյուղի ծխական դպրոցն ավարտելուց հետո ուղարկում է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցում ուսանելու: Եվ ահա Արշակը, 1883-ին հաջողությամբ ավարտելով, վերադառնում է հարազատ գյուղ եւ որպես ուսուցիչ աշխատում գյուղի երկսեռ դպրոցում: Սակայն հայրը, նկատելով որդու գիտելիքների հիմնական ուղղվածությունը, հակումը դեպի հոգեւոր-եկեղեցական կյանք, Արշակին կրկին ուղարկում է Թիֆլիս, ուր 1885 թվականի օգոստոսի 22-ին Թիֆլիսի մայր եկեղեցում Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը նրան ձեռնադրում է ամուսնացյալ քահանա՝ անվանակոչելով Մեսրոպ: Այդ օրից սկսվում է Մեսրոպի քահանայական, մանկավարժական եւ հասարակական գործունեությունը Քարվանսարայում, Դիլիջանում, Վերին Աղդանում, Գոշավանքում, Սոի, Ռեւազլու եւ այլ հայկական հարակից գյուղերում (ՊՊԿԱ Ֆ - 409, ց -1, գ - 2445):

Ըստ գրավոր աղբյուրների՝ գյուղի Ամենափրկիչ եկեղեցու քահանա տեր Մեսրոպը եղել է խորապես հարգված անձնավորություն: Նա իր ազնիվ ծառայությամբ վայելել է նաեւ հարեւան գյուղերի բնակչության համակրանքը: Եղել է նաեւ ուշադիր հայր եւ ամուսին: Իր կնոջ՝ քահանայի դուստր Նունուֆարի հետ մեծացրել են հինգ զավակ (երեք տղա եւ երկու աղջիկ):

Մեսրոպ Էդիլյանի կյանքն ու գործունեությունն ընթացան Հայաստան երկրի համար ծանր ու խառնակ ժամանակում: Մի կողմից տարածաշրջանում բնակվող թուրքալեզու ավազակներն էին հաճախակի հարձակվում, թալանում ունեցվածքը, սպանում, մյուս կողմից էլ՝ բնական աղետներն էին իրենց սեւ գործն անում:

Արդյունքում՝ բնակչությունը միշտ մնում էր աղքատության ճիրաններում: Եվ այս պայմաններում, քահանայական գործերին զուգընթաց, Մեսրոպ Էդիլյանն ամեն կերպ ջանում է իր ծխի անդամներին օգնել նաեւ աշխատանք, ապրուստի միջոց հայթայթելու ուղղությամբ: Այդ նպատակով, որպես բարեգործական ընկերության տեղական ճյուղի նախագահ, նա որոշում է գյուղում կազմակերպել գորգագործության արտադրություն: Դիմում է Թիֆլիսի Հայկական բարեգործական ընկերությանը՝ խնդրանքով, որ հատկացնեն 500 ռուբլի, որովհետեւ իրենց միջոցները չեն բավարարում համապատասխան վարպետներին հրավիրելու, գործիքներ, նյութեր ձեռք բերելու համար: Մտահղացումը իրականացվում է, եւ տասնյակ ընտանիքների տրվում հնարավորություն՝ ամենօրյա կարիքները հոգալու:

Հայտնի է, որ այդ շրջանում հայկական գրեթե բոլոր գյուղերը չունեին դպրոցներ, եւ բնակչության մեծ մասը խարխափում էր տգիտության մեջ: Ժողովուրդի ջանքերի շնորհիվ որոշ գյուղերում հաջողվել էր ստեղծել ծխական դպրոցներ, սակայն 1903-1905 թվականներին Կովկասի փոխարքա իշխան Գոլիցինի վարած հակահայկական քաղաքականության հետեւանքով դրանք էլ փակվում էին:

Տարիներ շարունակ Էդիլյանը ջանքեր է գործադրում Գոշավանքի, Թեղութի, Սոի գեղի, Ռեւազլուի, Խաշթառակի դպրոցների աշխատանքները վերականգնելու համար: Նախաձեռնում եւ ավարտի է հասցնում Խառատաձոր ջուր հասցնելու գործը, Վերին Աղդանի, Դիլիջանի գերեզմանատնոց ցանկապատումը, Քրդեւանի եւ իր գյուղի եկեղեցիների նորոգությունն ու գյուղում ժողովրդական տան երկհարկանի շինության կառուցումը եւ այլ աշխատանքներ:

Եղած դժվարություններին հետեւում են նաեւ նորաստեղծ խորհրդային կարգերի ծանր ժամանակները. հալածանք եկեղեցու եւ նրա սպասավորների դեմ: Հաշվառվում են հոգեւորականներն ու սահմանվում խոշոր հարկեր, ստեղծում անելանելի պայմաններ՝ բնակչության շրջանում հոգեւոր գործունեությունը տապալելու նպատակով: Շատ քահանաներ ստիպված հրաժարվում էին իրենց հոգեւոր ծառայությունից: Իսկ ովքեր հաստատուն մնացին իրենց կոչմանը, ենթարկվեցին հետապնդումների ու բռնադատման: Փակվեց եկեղեցիների գերակշիռ մասը, թալանվեցին սպասքի առարկաներն ու մնացյալ ունեցվածքը:



Այսպես անմայացավ նաեւ Ղազախի սուրբ Վարդան եկեղեցին, որը տեղի թուրք ազգաբնակչությունը վերածեց շտեմարանի: Նախկին քահանա Զաքարիա Ատրեսյանն էլ Էդիլյանին է հանձնում եկեղեցու սպասքը: Այս մասին 1926 թվի հոկտեմբերի 20-ի մի հայտարարությամբ Մայր Աթոռի գերագույն խորհրդին է դիմում Էդիլյանը, խնդրում համապատասխան թույլտվություն՝ «իրերը բաժանել Իջեւանի եւ Վերին Աղդանի երեք եկեղեցիաց վրա, որոնց մոտ շատ չնչին են», միեւնույն ժամանակ խնդրում Գերագույն խորհրդից «բարեհաճ ուշադրութիւն գաւառի բարձիթողի արած վշտալի, անտէրունչ հաւատացեալ հայերի եւ քայքայուած անմխիթար, անհովիւ եւ անբարեզարդ եկեղեցուց վրայ» (Ֆ-409, գ-2433, ց-1):

*Շարունակությունը՝ էջ 7*

# Գրիգոր Նարեկացի



Սկիզբը՝ էջ 4

Ծովը, որ Վանա լիճն է, տարբեր ձեւերով առկա է «Մատյան ...»-ում: Կան նաեւ որոշակի հիշատակումներ: Օրինակ՝ «... ճայի գույնով եմ ճանաչվում» (ՅԱ, բ): Ծովից հեռու մարդը ճայի տեսողական պատկերից էլ հեռու կլիներ:

Դեպի ափ է գալիս ծովի հաջորդ ալիքը, «Արդ, ես ծնունդս մեղքի եւ մահացու երկունքի որդիս» (ԺԸ, ա): Նարեկացին իր խոհն ու ապրումը ներկայացնում է շարժվող գործողությունների միջոցով: Ալիքի շարժումը եւ մտքի ներքին շարժումը դառնում են գործողություն (ԺԸ, ա): Ահա այս գործողությունն է, որ վիթխարի պռեմի փոթորկահույզ տարերքը դնում է ընթացքի մեջ՝ իսպառ բացառելով տեղապտույտը:

Թեեւ «մեղքերս նման են իրար» եւ պահանջում են «զուգակշիռ» հատուցում, այդուամենայնիվ այդ «նման»-ն ու «զուգակշիռ»-ը ամենեւին շրջապտույտ չեն ստեղծում: Նման եւ տարբեր՝ հաջորդաբար մեկը մյուսին փոխարինող, մեկը մյուսին զորացնող փոթորկահույզ ալիքների: Ահա դրա գեղարվեստական ձեւակերպումը. «Նախատված անձիս կշտամբանքների շարքը նույն ձեւով ու պատկերներով Պիտի կրկնեմ ես այստեղ վերստին նոր-նոր բարդությամբ» (ԻԲ, ա): Այնուհետեւ, մտաբերելով իր նկարագրած մեղքերը եւ դրանք քիչ համարելով՝ շարունակում է. «Ուստի ես պիտի փոխեմ իմ խոսքի եղանակն հիմա, Բայց ոչ ավաղանքն իմ աղետների» (ԻԵ, ա):

Եղանակը փոխում է, բայց պատկերի հիմքը նույնն է. «Կյանքը ինձ համար նման է սաստիկ ծփացող ծովի, Ուր հոգիս մարմնիս շինվածքով՝ իբրեւ նավակում, Իրար վրա խուժող անթիվ, անհամար ալիքներից Տարբերվում է միշտ այս աշխարհում» (ԻԵ, բ): Այսպես նա իրեն ամեն պահի տեսնում է «հոգեւոր խորտակման» մեջ: Ամբողջ այս գլուխը ծովի, փոթորիկի, նավի խորտակման տեսարանն է պատկերագրում: Այնքան նուրբ մանրամասներով է Նարեկացին ներկայացնում խորտակվող նավի թիակները, կայմը, առագաստը, դիտարանը, առասանները, պարանները, սամիները, խարիսխը, ղեկը, լաստի ողնափայտը, նավագոգը, հետնակողմը, տախտակաշարը, բազմոցներն ու գահավորակը, ողբացող նավապետին, որը «Ձեռքը ծնոտին դրած՝ արցունքի գե՜տ է հոսեցնում», որ թվում է, թե ինքը ե՛ւ նավը կառուցողն է, ե՛ւ նավաստին, ե՛ւ նավապետը:

Ամեն ինչ խորապես անձնավորված է: Որքան էլ Նարեկացին՝ որպես մարդ անհատ, լինի մարդկության խորհրդանիշ, այնուամենայնիվ այնքան ներանձնական ինքնակործան անմիջականությամբ է ամեն ինչ ներկայացնում, որ ասես ոչ թե ինքն է մարդկության խորհրդանիշը, այլ հակառակը՝ մարդկությունն է իր խորհրդանիշը: Սա արդյունք է ծայրահեղ կենտրոնացման, ինչը եւ աղոթքի գերագույն վիճակն է: Այնպիսի կենտրոնացում, որ երբեք չկասկածես, թե Աստված չի լսում քեզ: Դա բարձրագույն հավատն է, որի միջոցով Նարեկացին փորձում է երկրային մեղքերի մեջ կորած մարդուց նոր մարդ ստեղծել:

Այս ամենով հանդերձ Նարեկացին ունի իր ժամանակի եւ իր միջավայրի շատ սուր զգացողություն. նրա առջեւ են ե՛ւ այնպիսիները, ում հանդեպ մաքրության պատասխանատվությունն է կրում, ե՛ւ նրանք, ովքեր թույն ու չարություն են տարածում, որոնցից նա խորապես խոցված է ու մահացու վիրավորված:

Նարեկացին հազարապատիկ ավելինով է մարդկության մեղքերի տերը, բայց ծանր է տանում կողքի գոյությունների խայթոցները. «Եվ քանզի խտրություն չդրի մանր ու մունր հանցանքների միջեւ, համարելով նրանք անվնասակար, Չաչիր զեռունների խայթումներից խոցոտվում եմ արդ արժանապես» (ԺԹ, գ): Եվ ապա. «Չինեցի իմ դեմ անզգամ եւ անպարտելի հակառակորդներ...» (ԻԱ, բ): Մեկ այլ առիթով ինքնաճանաչումն այսպիսի բովանդակություն է ստանում. « Ունեմ ես նաեւ մի այլ դժնդակ կսկիծ իմ սրտում. - Ուրիշները ինձ համարում են այն, ինչ որ չեմ երբեք» (ԻԷ, գ): Դա էլ է նա իրեն արժանի համարում, որովհետեւ իրեն չի տեսնում անգամ մարդկանց մեջ. «Անունն անգրելի մի վիժվածի պես՝ մարդահամարից ջնջվեցի» (Ի, բ): Նարեկացին ջանում է իր կորցրածը վերականգնել, կորուստի դժոխային անդունդներից դուրս գալ եւ վերստին կերպավորվել իր արժանի տեսքով. «Ընդունի՛ր ինձ, Տե՛ր, հոգուդ պատկերով կերպարանելով ինձ կրկին անգամ...» (Ի, գ):

Ինքնախարազանումը՝ որպես քրիստոնեական մաքրագործման միջոց, դառնում է գլխավոր նպատակ. «Եվ ես, որ տմարդների կարգն եմ դասված՝ ինչպե՞ս համարեմ ինձ մարդ» (ԻԱ, գ):

*Շարունակելի*
***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***



**ԵՐԱՆԵԼԻ ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ (ՇԱՆՀԱՅԱՍԿԻ)**

# Մենության հոգեվարք

## Վախի պնեւմատիկա

Ա

Վախը մարդկության հոգեվարքն է... Մինչեւ վերջ դժվար է նրան հասկանալ եւ միանգամայն անհնարին՝ բուժել: Այն կարելի է միայն դարմանել երկնքով կամ էլ խլացնել երկրի միջոցով, կասեցնել ունայնությամբ, քողարկել հոգսերով: Այդ տառապանքից քեզ կարող ես հեռու պահել միմիայն տարբեր ձգտումներով, ծրագրերով, հույսերով, երկրային կարճ ուրախություններով եւ կամ էլ՝ երկրային այլեւայլ ցավերով:

Վախը քամու պես հետապնդում է մարդուն իր բոլոր ճանապարհներին: Կյանքում ինչից ասես չեն վախենում մարդիկ: Արարչի՝ իրենց հանդեպ ունեցած վստահությունից հեռանալով՝ նրանք կառուցում են երկրային սեփական կյանքը՝ շրջապատված անհանգստություններով, վախերով, ահ ու սարսափով:

Երբ մարդիկ դադարեցին լինել Աստծո քաղցր վստահության եւ Աստծո հանդեպ իրենց վստահության դրախտում, սկսեցին ամեն բանից տառապագին վախենալ եւ համայն աշխարհին էլ իրենցով վախեցնել: Մարդիկ անկայունությամբ ու թշվառությամբ լցրին այն աշխարհը, որում ապրում են՝ մշտապես ձգտելով այլ՝ առավել վեհ կյանքի, որն էլ երբեք համարյա չի արձագանքում իրենց: Երկրայինի մեջ խեղդված մարդն այժմ տեսնում է միայն սեւ հողը: Եվ ողջ բնությունն էլ, զգալով մարդու հեռացումը կատարյալ կյանքից ու ազատությունից, ե՛ւ տանջում է նրան, ե՛ւ վախենում նրանից... Տատասկով է շրջապատվել մարդկային կյանքը, եւ կանկառներ են աճել նրա ճանապարհին: Չարությունն ու վախը սկսեցին խայթել մարդուն. դրանք ի զորու են խայթելու նրա լոկ «գարշապարը» (Ծննդ., Գ 15), սակայն հենց գարշապարում, այսինքն՝ արտաքին, մակերեսային զգացումներում ու մտքերում է կենտրոնացել այժմ երկրային՝ լուսավոր Բանականության բարձունքից ընկած ողջ կյանքը: Եվ ողորմելի այդ գարշապարից խայթված մարդն իր ողջ գոյությամբ սկսեց ուժասպառ լինել. շնորհազրկված նա այդչափ թույլ է: Գազանի պես նա դողում ու վախենում է ամեն բանից, *«Ահ ու դող ընկավ վրաս, եւ խավարը ծածկեց ինձ»* (Սաղմ., ԾԴ 6):

Կորցնելով իր առաջին սերը (Հայտն. Բ 4) եւ դեռեւս չսովորած իր վերջին՝ առ Քրիստոս սիրուն՝ մարդը նայեց աշխարհի՝ ահռելի ու սառը իր որջին ու սարսափեց: Այդպես սկսվեց նրա պատմությունը, ինչը չի կարողանում հաղթահարել նաեւ արդի մարդկությունը: Նա սկսեց օրհասներից, իր եւ ուրիշների ոչ ճիշտ կյանքից հալումաշ լինել: Չար ուժերը սկսեցին տանջել նրան, ձգել դեպի իրենց, նվիրել խաբուսիկ հաճույքներ, իսկ հետո հարվածներ հասցնելով՝ հրճվել նրա անօգնական ու տրտում լինելուց: Մարդը սովորեց իր վրա խավար ուժերի իշխանությունն ունենալուն: Եվ ահա նրան սկսեց համակել մի նոր զգացում՝ շրջապատի համար չար ու սարսափազդու լինելու հրճվանքը: Եվ որքան նա շատ է ապրում ուրիշին ատելու, նրան իշխելու, իրենով հպարտանալու չար բերկրանքը, այնքան ավելի է նա սարսափում եւ զգուշանում այդ ուրիշից:

Խորհրդավոր եւ ահազդու է մարդու ծնունդն աշխարհում: Սարսափելի է մարդու համար անցումն աշխարհի խավար որովայնից դեպի խորհրդավոր հավիտենություն: Սարսափելի է այս կյանքի ամեն մի ակնթարթը՝ իր նորամուծություններով ու պատասխանատվությամբ: Բայց մարդը սովորել է խաբել իր վախին, սովորել է թաքցնել այն, նույնիսկ ծիծաղել վրան. խաբում է, ավելին՝ ենթարկվում եւ զոհաբերվում նրան, որպեսզի մի քիչ ավելի հեշտին դարձնի իր գոյությունը նրա իշխանության տակ: Այդպիսին է հին ու ժամանակակից կռապաշտության, կյանքի արհեստական այգու պաշտամունքի եւ Աստծուց դուրս մտորումների էությունը: Մարդը խաբում է իրեն՝ ապրելով անհոգի ու անահ:

Մարդկության ժամանակակից վազքը, հետաքրքրությունները, պատկերացումներն ու քաղաքակրթությունը, տարածության ու ժամանակի մեջ մարդկանց արագացված ողջ հարապտույտը պայմանավորված են ոչ միայն մարդկանց սոցիալական ու մշակութային կապերով, այլեւ աշ-



խարհում մարդու սարսափելի մենությունից, որը փորձում է թաքցնել թե՛ իրենից, թե՛ ուրիշներից:

Հնում կուռքերին ու ֆետիշներին երկրպագելն արդեն իսկ մենության դրսեւորում էր: Ձգտելով թաքցնել իրենից եւ ուրիշներից իր ոչնչությունն ու առանց Աստծո իր բնազանցական (մետաֆիզիկական) մերկությունը՝ մարդը կառուցել եւ շարունակում է կառուցել աշխարհը: Սակայն նույնիսկ մարդու այդ նսեմափակ՝ իր թուլությունն ու փոքրությունը թաքցնելու ձգտումի մեջ թաքնված է նրա ճանապարհի ընտրելու ազատության կայծը:

Չգնահատելով եւ չարժեւորելով Աստծո որդին լինելու իր վսեմ արժանապատվությունն ու ազատությունը՝ իր անսիրո, անհավատության ու անհնազանդության ողջ ցավի միջով մարդն այժմ պիտի սովորի այդ ազատությանը՝ Աստծուն հավատալով, Աստծուն սիրելով եւ Նրան հնազանդվելով:

Երկիրը, մինչեւ իր վերջին փոշեհատիկն ու ցողունը Աստծունը լինելով, մարդու համար դարձավ խստագույն դպրոց: Այո՛, երկիրը, երկնային աշխարհի հետ բուրումնավետ իր նմանությամբ, դարձավ Աստծո ճշմարտության խստագույն ուսումնարան:

Մարդու՝ Աստծուն չսիրելու ներքին աղետը տեղի է ունեցել եւ շարունակում է ունենալ մարդու արտաքին, ֆիզիկական ու պատմական հանգամանքների բերումով: Հոգու խորքում ծնունդ առած եւ ապաշխարությամբ չլվացված չարը վերքերով, խոցերով եւ հիվանդություններով շրջում է երկրագնդի մարմնով մեկ: Աստվածաշնչի «փուշն ու տատասկը», որոնցով շրջապատված է կյանքը, հիվանդություններն են, երկյուղները, խուճապներն ու սարսափները. դրանք արտաքին աշխարհի սողոսկեցին, վազեցին, թռան մարդկային հոգու ներաշխարհից, որը սասանվել ու ցնցվել էր Աստծուն իր դավաճանումից:

Հին աշխարհի պատմիչները (ինչպես Fustel de Coulang - “La Cite antique”) վկայություններ են թողել այն անմարդկային, «տոտալիտար», խավարամիտ վախի մասին, որով շարժվում եւ առաջ էր ընթանում հին աշխարհի պատմությունը:

Կյանքի բոլոր ոլորտներում մարդիկ հենց այդ վախի ճորտն էին, քանի դեռ նրանց չտրվեց Նորը՝ սուրբ օրենքի հանդեպ վերին վախը: Արարիչը երկրային վախերից Իր Օրենքի վախով է բժշկում մարդկանց: Գնալով մռայլվող եւ ամբողջ ժամանակ, ամեն քայլափոխի ինչ-որ բանից վախեցող մարդկությունը կարող է իր խավարամիտ վախից բժշկվել միայն նոր՝ վերին, լուսավոր վախով. արդեն ոչ թե կյանքի ու ճակատագրի թելադրած սարսափի հանդեպ անիմաստ դողէրոցքով, այլ Արարչի Օրենքի եւ Նրա Ոգու առջեւ ակնածալից երկյուղով, բարոյական պատասխանատվության երկյուղով՝ հանուն առկա ճշմարտության եւ սիրո շնորհի. *«Կոշիկներդ հանի՛ր, որովհետեւ այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է»* (Ելք, Գ 5):

*Շարունակությունը՝ էջ 8*

**ԵՐԱՆԵԼԻ ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ (ՇԱՆՀԱՅԱԿԻ)**

# Մեռնության հոգեվարք

*Սկիզբը՝ էջ 6*

Բանի մարմնավորումից եւ Հոգու Կրակի աշխարհ գալուց հետո ողջ հողագունդը (մարդկության բարձրագույն գիտակցության համար) դարձավ սուրբ, եւ երկրի վրա մարդկային մեղքը դարձավ առավել գարշելի, առավել մեծ խելահեղություն, քան այն ժամանակներում, երբ միայն Օրենքն էր: Տիրոջ մեծ կատարելության այրվող թփի առջեւ լուսավոր երկյուղը մարդկության վերջին իմաստության սկիզբն է:

*«Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է»* (Առակ. Ա 7, ԻԲ 4): Իր ճշմարտության խոսքով Արարիչը մարդկության կյանքից դուրս քաշեց



մահացու նետը եւ հենց այդ նետով էլ ոչնչացրեց չարը: Ազատելով վախը դիվային թույնից՝ Աստծո Հոգին սկսեց այդ վախով ամրացնել եւ վեհացնել մարդկային սրտերը: Եվ վախին, ինչպես եւ իրենց կյանքին վարժված մարդիկ սկսեցին սնվել նոր՝ վերին երկյուղով եւ վերադարձան Աստծուն, իրենց կյանքի իմաստին՝ ազատելով իրենց հին վախից: Վախը վնասազերծ եղավ, այլակերպվեց, դեպի երկինք բարձրացավ...

Աստծո այդ երկյուղը ընդունակ է անընդհատ վեհանալու եւ ազնվանալու՝ դուրս գալով ուզածդ վեհերոտության շրջանակներից: Այդ իսկ պատճառով էլ այն դուրս չմղվեց Աստծո Որդու աշխարհ գալով, Ով աշխարհին Նոր Ավետարան բերեց. արդեն ոչ թե վախի, այլ սիրո խիզախումի Ավետարան: Երկյուղը մնաց աշխարհում որպես պայծառ մի լուսապսակ՝ մարդկության՝ առ Աստվածային Մաքրություն ունեցած բուռն ձգտումի:

Մարդկությունը սկսեց ապրել երկու՝ մաքուր, սուրբ եւ մութ, մեղսալի վախի արանքում՝ տուժորվելով մերթ մի վախից, մերթ՝ մյուս: Մարդը դեռեւս մնացել է ունակ, Աստծո Ուժի առջեւ հրեշտակային ակնածանքի վեհ զգացումների կողքին, իր մեջ թաքցնելու եւ բացահայտելու նաեւ դիվային մութ վախը, այն է՝ սնոտիապաշտությունը, ինքնասիրությունը եւ եսապաշտությունը:

Խորը հոգեկան երկփեղկվածությունը, որ շատ շատերն են ապրում ու գիտակցում, կարող է բժշկվել միայն երկյուղով մաքրվելուց եւ փայլեցվելուց: Մարդկային ապրումներում վախի ինչ նշույլ էլ ուզում է լինի, հնարավոր չէ վերացնել, սակայն վեհացնել կարելի է: Այս վեհացման մեջ է կատարվում մարդկային անհատականության կրոնական ծաղկումը:

**Մարդու առաջին խավարածին վախը Աստծուն տեսնելու երկյուղն է:** Դա համայն աշխարհի ադամամարդկության մշտական թաքնվելն է Աստծուց. *«Մերկ էի, եւ թաքնվեցի»* (Ծննդ. Գ 10): Այդպես եւ մինչ օրս մարդկությունը իր գործերով, զգացումներով ու ցանկություններով թաքնվում է Աստծուց:

**Մարդու երկրորդ խավարածին վախը մարդուն տեսնելու վախն է:** Մարդաբանության ճշմարիտ խորքը բացահայտվում է Աստվածաշնչի առաջին էջից եւեթ. *«Ես կթաքնվեմ... ահ ու դողի եւ երերման մեջ կլինեմ երկրի վրա, եւ ով հանդիպի, կսպանի ինձ»* (Ծննդ. Ե 14): Սա Կայենի խոսքերն են՝ եղբորը սպանելուց հետո:

Մարդն ինչպես վախենում է Աստծուն չգտնելուց, այդպես էլ վախենում է Աստծուն գտնելուց, իր Փրկչին իր եւ մեկ այլ մարդու ներսում տեսնելուց: Մարդը երբեմն էլ վախենում է իր եւ իր եղբոր մոտ վսեմ մարդկայնություն գտնելուց:

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ***

# ՄԱՔԵՆՅԱՑ ՎԱՆՔԻ ՀՈՒՇԸ

*Մաքենյաց վանքը գտնվում է Վարդենիսի շրջանի Մաքենիս գյուղում: Այն հայտնի է եղել դեռեւս 7-րդ դարից: 9-10 դդ. եղել է Մեծ Հայքի Գեղարքունյաց գավառի ամենանշանավոր կրոնական-մշակութային կենտրոնը: Հիմնական խմբի հուշարձանները գտնվում են 8-9 մ բարձրություն ունեցող պարսպի ներսում: Կենտրոնում գլխավոր եկեղեցին է, որը 9-րդ դարի վերջերին կառուցել է իշխան Գրիգոր Սուփանը: Գլխավոր եկեղեցուն հարավ-արեւելքից կից է ավելի վաղ կառուցված միանավ եկեղեցին, իսկ արեւմուտքից՝ գավթի պատերի մնացորդները: Հարավ-արեւելքում գտնվում են միմյանց կից երկու միանավ թաղածածկ 9-10 դդ. եկեղեցիներ:*



Նա հոգնած կանգ առավ ձորափին, նստեց իրենից ծեր, իրենից առավել հուշեր ունեցող, արեւից ու անձրեւից ճաքճքած մի քարի վրա ու հայացքն ուղղեց երկնի անսահմանությանը: Օրն արեւոտ էր, եւ երկնի կապույտը՝ մաքուր ու շափյուղյա, ինչպես հազար, երկու հազար, տասը հազար տարի առաջ, ինչպես միշտ ու հավիտենապես: Օդում նույն ծաղկանց բույրն էր, նույն շնկշնկան մեղմանուշ քամին, արարչական նույն շունչն ու նույն խորհուրդը: Միայն ձորամիջյան առվի կարկաչն էր փոխվել. դարերի մեջ ջուրը բարակել, դարձել էր ծերծրան: Չկար աղավնիների՝ «ղուշբազ» սարկավագի ճերմակ ու գորշաթեւ աղավնիների կվկվոցը, եւ շարականների աստվածահաճո հնչյուններն այլեւս, վանքի պատերը համբուրելով, աղոթքի խոսքերն առած չէին տանում հասցնում երկնային արքայության պալատները:

- Ի՞նչ եղավ քեզ, իմ շեն ու շենշո՛ղ «հարսնիկ»: Ո՞ւր է քո զանգերի ղողանջը: Ես այլեւս չեմ լսում քո փայտյա դռան օրնիբուն հնչող ճռռոցը եւ ծեր վանահոր տրտնջոցը. «Բա՛վ է այդ դուռը լացացնեք, ականջներս հոգնեցին»,- հայացքը վանքին ուղղած՝ նա տարվեց հուշերով: Հուշ էր թե վերհուշ՝ միեւնույն է, աչքերը բաց էին, սրտի զարկերն՝ անկանոն, ու հոգին՝ խռովահույզ:

- Ինձ հետ լիներ վանահայրը, իր մոմե մատներով սանրեր ճերմակած մորուքն ու ականջիս շշնջար. «Աբեղա՛, հոգսերից ու գործերից խոնջացած եմ, քո ձայնն անուշ է, որեւէ ե՛րգ մրմնջա. եւ այնպե՛ս, որ արցունքները մաքրեն հոգիս»:

Ու ես երգեի, եւ երգն իմ խոսեր մեր անուշ աշխարհի, ծաղկակար հանդերի, երկնաքեր լեռների, Տիրամոր աչքերի պես կապույտ մեր լճակի մասին, խոսեր մեր ցավ ու վշտի, չար մարդոց անիրավ աշխարհի մասին:

- Վանահա՛յր, ժամն է երեկոյան ժամերգության. բայց տե՛ս վանքը. մեր վանքը դատարկ է ու լքյալ: Չկա ժամհարը, որի ձայնն ավելի ուժգին էր հնչում, քան զանգերինը: Տեսնո՞ւմ ես, վանահա՛յր, լռել է անգամ գյուղական հովվի սրինգը: Նրա «Տատրակի երգը» այլեւս չի հուշում մեզ, թե պահն է նախաճաշի: Նայի՛ր, հանդերից չի լսվում ճերմակամազ մաքիների մայոցը: Որքա՜ն շատ էին ու որքա՜ն գեղեցիկ: Չէ՞ որ մեր վանքը նրանց մորթեղենի շնորհիվ կոչվեց Մաքենյաց: Հիշո՞ւմ ես՝ ինչպիսի խնամքով էր վարպետը կարում մեր աբաները՝ ամեն անգամ կրկնելով. «Ձմեռներն այստեղ սաստիկ են, մաքիների մազածածկ մորթերը ձեզ կպաշտպանեն սառնամանիքներից»: Որքան զորովանք կար նրա խոսքերում: Իսկ մեր դպրանո՞ցը: Մտաբերո՞ւմ ես արդյոք այն: Ի՜նչ սաներ ունեինք: Նրանց ամենաբաշխ աստվածային «կարը» լավագույն բալասանն էր հիվանդ ու հոգնած, ծարաված ու քաղցած հոգիների: Համայն հայոց աշխարհից ուսումնատենչ այրերն ու պատանիներն այստեղ էին գալիս՝ հագուրդ տալու իրենց ծարավին: Ո՞ւր է մեր փոքրիկ նկարիչը, որ անվերջ տրտնջում էր. «Վանահա՛յր, ոսկեփոշին քչություն է անում, մեղքն իմը չէ, այլ վանքինը. շատ է ոսկեգույն. դրսից միայն ոսկի է թվում, ի՞նչ անեմ»: Ինչո՞ւ չի լսվում քո պատասխանը. «Անիրա՛վ, մի՞թե միայն դրսից, ապա նե՞րսը: Ինչպե՞ս կարող է դպրանոցը՝ մտքի ու իմաստության, գիր ու գրականության, քերթողության դարբնոցը ոսկի չլինել: Մեր աղոթքն առ Բարձրյալը մի՞թե ոսկի չէ, մեր հոգու լույսն ու մեր մտքի թռիչքը ապա ի՞նչ են, եթե ոչ ոսկի, այն էլ ինչպիսի՜ ոսկի՝ զտարյուն ու մաքուր, բոցեղեն, ինչպես կիրքն արարչագործության»:

Մտքերը նրան տարան հեռու դարերի խորքը եւ չնկատեց, թե ինչպես հայտնվեց ձորի մյուս ափին, վանքի կամարների տակ:

«Երնեկ հիմա լիներ, ու մեր վանքը ամենավեհ ու ամենատենչ կենտրոնը լիներ,- վանքի պատերը շոյելով՝ երազեց նա:- Գյուղից ուխտավորները գային ու մի պահ վանքի պարիսպների տակ կանգ առնեին: Գային, ու գեղջկական երգը, շարականին խառնված, լցվեր ձորը, թաքնվեր քարանձավի մութ ճեղքերում, ու օրը դառնար խնկանուշ ու խնկաբույր: Մաքենյաց վա՛նք, այս լեռների ու ձորերի մեջ ծվարած իմ հրաթե՛ւ կռունկ, ո՞ւր է քո թռիչքը: Ես քո հուշն եմ, քո փառահեղ օրերի ոսկեհնչյուն երգը: Ես քո անցյալն եմ՝ պայծառ ու լուսե, ես քո ներկան եմ՝ խոնարհված ու անշուք:

Լիներ մեկը, բռներ ձեռքս ու... մեր շեն ու շենշող վանքը տաներ...»:

***Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ***

# ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՋԱՎԱԽՔ

Օգոստոսի 18-21-ը, «Հայաստանն իմ Հայրենիքն է» հանրապետական երիտասարդական առաջին փառատոնի շրջանակներում, ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերով փոխնախարար Լիլիթ Ասատրյանի գլխավորությամբ 30 հայ ուխտավոր-ճամբարականներ գտնվում էին Ջավախքում: «Ծրագիրը, որի շրջանակներում մենք այսօր գտնվում ենք Ջավախքում, մի քանի նպատակ ունի. ծանոթանալ ջավախքահայ երիտասարդությանը հուզող խնդիրներին, համագործակցության նոր եզրեր փնտրել տեղի երիտասարդական կառույցների հետ, իրականացնել բարեկարգման եւ մաքրման աշխատանքներ, ինչպես նաեւ հանդես գալ մշակութային ծրագրերով: Մեր այցելությունը նաեւ ճանաչողական է, քանզի առաջնային նպատակներից է Ջավախքի հայկական հարուստ պատմա-ճարտարապետական անցյալին ծանոթանալը եւս»,- այցի նպատակը կարեւորեց Լիլիթ Ասատրյանը:

Հայաստանից ժամանած հյուրերին Ախալքալաքի Սուրբ Խաչ հայոց եկեղեցու բակում դիմավորեցին տեղի բնակչությունն ու Ջավախքի առաջնորդական փոխանորդ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը: Հայր սուրբը, օրհնելով ներկաներին, ընդգծեց, որ նման յուրաքանչյուր այցելություն հույս ու հավատ է ներշնչում տեղի հայ երիտասարդությանը: Նույն օրը փոխնախարարը երիտասարդների հետ եղավ Ջավախքի մարզամշակութային միության երիտասարդական կենտրոնում, ուր եւ զրուցեց երիտասարդներին հետաքրքրող հարցերի, նրանց հոգեւոր դաստիարակության շուրջ:

Հայր Բաբկենի գլխավորությամբ պատվիրակությունն այցելեց Ջավախքի նոր վերանորոգված առաջնորդական փոխառաջնորդություն, եղան նաեւ Թմբկաբերդում, Խեյթվիսում, Վարձավունի հայ իշխանների քարանձավային քաղաքում, տեղի հայկական եկեղեցիներում: Ինչպես Սուրբ Խաչ, այնպես էլ այցելած մյուս եկեղեցիներում ճամբարականները տեղի բնակչության հետ միասին կազմակերպեցին մաքրման աշխատանքներ:

Հանդիպումներ եղան Ախալքալաքի շրջանի հայաբնակ Դիլիսկա, Գումբուրդո եւ Արագովա գյուղերի բնակչության հետ: Փոխնախարարը տեղի միջնակարգ դպրոցների գրադարաններին հանձնեց հայատառ գրքեր, իսկ փոքրիկներին՝ խաղալիքներ:

Ախալքալաքի զբոսայգում փառատոնի մասնակիցները եւ այստեղ ժամանած հայ էստրադայի երգիչները հանդես եկան համերգային մեծ ծրագրով:

***ՎԻՐԱՀՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**հեռախոս՝**
**(0+231) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 1.9.2005 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**